Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն

# Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

## Սեպտեմբեր 2005

Ներկայացվում են 2005 թվականի նոյեմբերի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները. ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվար-հուլիս ամիսներին, իսկ ֆինանսական, արտարժութային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ օգոստոսին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ

© Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, 2005 սեպտեմբեր

# Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

| | 2002 | 2003 | 2004 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տարեկան ցուցանիշներ | | | հունվար-հուլիսի ցուցանիշներ | | | |
| **Իրական հատված** | | | | | | | |
| Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար) | 739.6 | 874.4 | 1,106.7 | 306.8 | 358.2 | 443.3 | 618.7 |
| ՀՆԱ-ի իրական աճ (%) | 13.2 | 14.0 | 10.1 | 9.4 | 14.9 | 9.3 | 11.6 |
| Արդյունաբերության աճ (%) | 13.9 | 15.6 | 2.1 | 11.9 | 18.1 | 3.9 | 5.8 |
| Գյուղատնտեսության աճ (%) | 3.8 | 4.2 | 14.5 | -0.8 | -0.3 | 10.8 | 14.1 |
| Շինարարության աճ (%) | 41.5 | 45.5 | 13.4 | 34.1 | 55.0 | 12.1 | 29.7 |
| Տրանսպորտ և կապի աճ (%) | -1.7 | 8.3 | 16.9 | 5.3 | 11.6 | 14.4 | 11.0 |
| Առևտուր և հանրային սննդի աճ (%) | 19.7 | 14.1 | 10.5 | 14.5 | 13.4 | 9.0 | 5.4 |
| Ծառայությունների աճ (%) | 12.0 | 8.6 | 12.1 | 6.2 | 8.0 | 16.8 | 10.2 |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր (%) | 0.7 | 4.6 | 6.0 | 0.9 | 3.8 | 7.1 | 3.7 |
| Սղաճ (ժ/շ վերջ, %) | 2.0 | 8.6 | 2.0 | -0.6 | 1.0 | 1.9 | -3.1 |
| **Հարկաբյուջետային հատված** | | | | | | | |
| Պետբյուջեի հարկային եկամուտներ (մլրդ դրամ) | 185.4 | 212.2 | 250.1 | 98.0 | 110.3 | 131.2 | 159.6 |
| Պետբյուջեի ծախսեր (մլրդ դրամ) | 235.8 | 242.0 | 295.9 | 124.6 | 128.7 | 146.4 | 192.7 |
| Պետբյուջեի դեֆիցիտ (մլրդ դրամ) | 7.8 | -8.1 | -2.0 | 5.8 | 2.8 | -7.2 | 1.4 |
| Պետբյուջեի հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %) | 13.6 | 13.1 | 13.2 | 17.4 | 16.4 | 16.6 | 17.4 |
| Պետբյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի %) | 17.3 | 14.9 | 15.6 | 22.1 | 19.1 | 18.6 | 21.1 |
| Պետբյուջեի դեֆիցիտ (ՀՆԱ-ի %) | 0.6 | 0.5 | 0.1 | 1.0 | 0.4 | 0.9 | 0.2 |
| **Արտաքին հատված** | | | | | | | |
| Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար) | 505.2 | 685.6 | 715.0 | 263.8 | 377.5 | 396.6 | 523.0 |
| Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար) | 987.2 | 1,279.5 | 1,351.0 | 495.4 | 726.3 | 727.9 | 933.2 |
| Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար) | -482.0 | -593.9 | -635.9 | -231.6 | -348.8 | -331.4 | -410.2 |
| Արտահանման աճ (% ) | 47.8 | 35.7 | 4.3 | na | 43.1 | 5.1 | 31.9 |
| Ներմուծման աճ (%) | 12.5 | 29.6 | 5.6 | na | 46.6 | 0.2 | 28.2 |
| Առևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %) | 20.3 | 21.2 | 17.9 | 23.5 | 30.3 | 23.3 | 20.6 |
| **Դրամավարկային հատված** | | | | | | | |
| Փողի զանգված (ժ/շ վերջ, մլրդ դրամ) | 203.1 | 233.8 | 285.9 | 160.0 | 203.0 | 243.1 | 326.7 |
| ՀՀ ԿԲ Զուտ արտաքին ակտիվներ (մլրդ դրամ) | 123.7 | 157.8 | 168.9 | 84.4 | 138.6 | 145.3 | 216.7 |
| Փողի զանգվածի շրջապտույտի արագություն* | 6.7 | 6.9 | 6.6 | 3.5 | 3.3 | 3.2 | 2.8 |
| Փողի բազմարկիչ | 2.0 | 2.1 | 2.2 | 2.0 | 2.0 | 2.2 | 1.9 |

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏԶՀ կենտրոնի հաշվարկներ:

# Ֆինանսական և արտարժութային շուկաներ

| | 2002 | 2003 | 2004 | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տարեկան ցուցանիշներ | | | 2005-ի ամսական ցուցանիշներ | | | | | | | |
| Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%) | | | | | | | | | | | |
| 9-12-ամսյա ՊԿՊ-ներ | 15.6 | 9.7 | - | - | 4.3 | 3.9 | 3.7 | 4.9 | - | - | 3.2 |
| Միջնաժամկետ մասնակի մարումներով | 19.7 | - | 5.6 | 6.0 | 4.6 | 4.6 | 5.3 | 4.9 | 5.7 | 5.3 | 5.1 |
| ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք | 19.0 | 18.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 18.0 | 18.0 | 17.0 |
| Վարկերի տոկոսադրույքներ | 18.8 | 20.9 | 18.2 | 17.0 | 18.8 | 19.1 | 16.6 | 18.9 | 18.0 | 18.4 | 18.4 |
| Ավանդների տոկոսադրույքներ | 4.2 | 6.4 | 4.4 | 4.1 | 6.1 | 5.9 | 5.8 | 5.6 | 6.1 | 6.0 | 6.2 |
| Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%) | 3.3 | 0.9 | -7.8 | 1.1 | -3.7 | -1.6 | -3.9 | 0.3 | -0.1 | -1.4 | 4.1 |
| Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (ժ/շ վերջ) | 584.9 | 566 | 485.8 | 478.5 | 471.2 | 458.1 | 439.3 | 445.1 | 442.3 | 447.7 | 468.3 |
| Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (ժ/շ վերջ) | 606.9 | 702.2 | 661.1 | 623.3 | 620.4 | 593.0 | 566.9 | 555.1 | 533.2 | 541.7 | 570.5 |
| Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (ժ/շ վերջ) | 18.3 | 19.2 | 17.5 | 17.1 | 17.0 | 16.5 | 15.8 | 15.8 | 15.4 | 15.6 | 16.4 |

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏԶՀ կենտրոնի հաշվարկներ:

# Հիմնական միտումները հունվար-հուլիս ամիսներին

**Տնտեսական աճի տեմպերը շարունակում են մնալ բարձր**

2005 թվականի առաջին յոթ ամիսների դրությամբ տնտեսական աճը կազմեց 11.6 տոկոս, որը 2.3 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արդյունքները: Տնտեսական աճն ընթանում է հիմնական ճյուղերում աճի արագացման պայմաններում: Առավելագույն աճ գրանցվել է շինարարության՝ 29.7 տոկոս և գյուղատնտեսության՝ 14.1 տոկոս ոլորտներում, իսկ նվազագույն աճը ծառայությունների ոլորտում է՝ 5.4 տոկոս:

**Սպառողական շուկայում գնանկում է**

Հուլիսին սպառողական շուկայում տեղի ունեցավ 4.5 տոկոս գնանկում՝ հիմնականում պայմանավորված պարենային ապրանքների գների 7.1 տոկոսով անկմամբ: Գյուղմթերքների գները նվազեցին 18.2 տոկոսով՝ պայմանավորված արտադրված բերքի առատությամբ: Արդյունքում դեկտեմբերի համեմատ սպառողական գները հուլիսին նվազեցին 3.1 տոկոսով: Այսպիսով, հունվար-հուլիսի սպառողական գների միջին սղաճի տեմպը դանդաղեց մոտ 5 անգամ՝ կազմելով 1.5 տոկոս:

Հուլիս ամսվա ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի գների կտրուկ անկումը հանգեցրեց ՀՆԱ-ի դեֆլյատորի գրեթե կրկնակի նվազման առաջին կիսամյակի նկատմամբ: Մինչ այս, 2003 թվականի նոյեմբերից ի վեր ՀՆԱ-ի դեֆլյատորը 4.0 տոկոսից ցածր չէր եղել:

Չնայած հունիսի նկատմամբ վառելիքի գների աննշան՝ 0.2 տոկոս գնանկմանը, հուլիսին գները մոտ 7 տոկոսով գերազանցեցին դեկտեմբերի մակարդակը: Վերջին երկու տարիների յոթ ամիսների համադրումը վկայում է գների մակարդակի միջինում 20.2 տոկոս աճի մասին:

**Դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ համառորեն մոտենում է 1996 թվականի մակարդակին**

Հուլիսին հայակական դրամի հաշվարկային միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 442.6 դրամ, նախորդ տարվա հուլիսի 525.9 դրամի դիմաց: Դեկտեմբերի համեմատ հայկական դրամի փոխարժեքն հուլիսին արժեքավորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ մոտ 7.8 տոկոսով, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 10.9 տոկոսով, իսկ Եվրոյի նկատմամբ՝ 18.1 տոկոսով:

**Արտաքին առևտրաշրջանառության նկատելի աշխուժացման հետ մեկտեղ խորացել է առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը**

2005-ի հունվար-հուլիսին արտահանումը աճել է 31.9 տոկոսով, որը առավելապես արդյունք է ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի գծով ծավալների եռակի ավելացման: Արտահանման աճին առավելապես նպաստել են Գերմանիա՝ 2.4 անգամ և Նիդերլանդներ՝ 4.5 անգամ արտահանման ծավալների աճը: Արտահանման աճը զսպվել է դեպի ԱՄՆ և Չինաստան արտահանման ծավալների կտրուկ անկման պատճառով: Չինական շուկաներ հայկական արտադրանքի արտահանումը գրեթե դադարել է՝ 96.8 տոկոսով անկում, իսկ ԱՄՆ արտահանման ծավալները կրճատվել են մեկ երրորդով:

Ներմուծումն աճել է 28.2 տոկոսով, որին ամենամեծ նպաստն են ունեցել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի գծով 30.7 տոկոս աճը, ինչպես և հանքահումքային արտադրանքի՝ 29.1 տոկոսով և տրանսպորտային միջոցների՝ 61.5 տոկոսով ավելացումները:

Ըստ ապրանքների ծագման վայրի ներմուծման աճն հունվար-հուլիսին առավելապես պայմանավորել են Ռուստանի Դաշտությունից՝ 50.6 տոկոս, Ուկրաինայից՝ 67.4 տոկոս, Գերմանիայից՝ 58.4 տոկոս, ինչպես նաև Ռումինիայից՝ 2.5 անգամ ներմուծման ծավալների աճերը: Միևնույն ժամանակ մոտ կրկնակի կրճատվել է բուլղարական ապրանքների ներմուծումը:

Թեպետ արտահանման ծավալների աճը առաջանցիկ է ներմուծման աճի նկատմամբ, առևտրային հաշվեկշռի պակասուրդը նախորդ տարվա յոթ ամսվա համեմատ 23.8 տոկոսով խորացել է, քանի որ ներմուծման ծավալները մոտ կրկնակի գերազանցում են արտահանման ծավալներին:

**Դրամայնացման գործընթացն ընդլայնվում է**

Փողի զանգվածը հուլիսի վերջին 2004-ի նույն ցուցանիշը գերազանցեց 34.4 տոկոս: Շրջանառության մեջ կանխիկն աճեց 35.6 տոկոսով, նախորդ տարվա 3.3 տոկոսի փոխարեն: Դրամի փոխարժեքի արժեքավորմամբ պայմանավորված՝ արտարժույթով ավանդների աճը կրկնակի զիջել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին:

Դրամով ավանդների շուրջ 70 տոկոս աճի շնորհիվ, 0.9 տոկոսային կետով բարելավվել է արտարժույթով և դրամով ավանդների հարաբերակցությունը: Այնուամենայնիվ, արտարժույթով ավանդները մոտ կրկնակի գերակշռում են դրամով ավանդներին:

**Հարկային եկամուտների աճն առաջանցիկ է ՀՆԱ-ի աճի նկատմամբ, սակայն ակցիզային հարկից մուտքերի անկումը շարունակվում է**

2005-ի առաջին կիսամյակի արդյունքներով պետբյուջեի եկամուտների աճն առաջանցիկ էր ծախսերի նկատմամբ: Այնուամենայնիվ, կիսամյակն ավարտվեց պակասուրդով: Հարկային եկամուտների 21.1 տոկոս աճն առավելապես ԱԱՀ-ից և շահութահարկից ստացվող մուտքերի աճի արդյունք էր:

Եկամուտների կատարման արդյունքների վրա նկատելի բացասական ազդեցություն թողեց ակցիզային հարկից ստացվող մուտքերի նախորդ տարվա նկատմամբ 11.9 տոկոսով կրճատումը:

2005 թվականի յոթ ամիսների նախնական տվյալներով ակցիզային հարկից մուտքերի անկումը կազմել է 10.2 տոկոս կամ 2.3 միլիարդ դրամ: Հուշագրավ է, որ այս գումարը նույնքան է, որքան նույն ժամանակահատվածում վճարվել է արտաքին պարտքի դիմաց որպես տոկոսավճարներ:

# Հիմնական բյուջետային ցուցանիշներ

*միլիարդ դրամ, ըստ փաստացի կատարման*

| | 2002 | 2003 | 2004 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տարեկան ցուցանիշներ | | | առաջին կիսամյակի ցուցանիշներ | | | |
| **Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ** | **228.3** | **292.0** | **302.2** | **102.3** | **119.6** | **128.2** | **161.2** |
| **Ընդամենը եկամուտներ** | **211.3** | **241.6** | **288.5** | **97.1** | **105.6** | **125.8** | **157.2** |
| Ընթացիկ եկամուտներ | 209.5 | 238.3 | 279.4 | 96.5 | 103.9 | 124.8 | 153.2 |
| Հարկային եկամուտներ, այդ թվում | 185.4 | 212.2 | 250.1 | 83.3 | 93.0 | 109.5 | 132.6 |
| Ավելացված արժեքի հարկ | 95.0 | 107.8 | 117.9 | 43.5 | 48.8 | 51.5 | 61.2 |
| Շահութահարկ | 17.4 | 17.6 | 32.0 | 8.3 | 7.6 | 14.2 | 23.1 |
| Եկամտահարկ | 12.5 | 16.8 | 20.4 | 5.3 | 7.6 | 9.2 | 11.2 |
| Ակցիզային հարկ | 35.3 | 39.1 | 40.7 | 14.9 | 16.6 | 18.9 | 16.6 |
| Պետական տուրք | 13.2 | 15.2 | 16.9 | 5.8 | 7.0 | 7.5 | 7.2 |
| Ոչ հարկային եկամուտներ | 10.9 | 10.9 | 12.4 | 7.4 | 3.9 | 7.9 | 13.3 |
| Կապիտալ եկամուտներ | 1.8 | 3.2 | 9.1 | 0.6 | 1.6 | 1.0 | 4.0 |
| **Պաշտոնական տրանսֆերտներ** | **17.0** | **50.5** | **13.7** | **5.2** | **14.1** | **2.4** | **4.0** |
| **Պետբյուջեի ծախսեր** | **263.9** | **312.7** | **334.0** | **111.7** | **125.6** | **135.1** | **164.3** |
| Պաշտպանություն | 36.8 | 44.3 | 52.3 | 16.9 | 19.5 | 24.8 | 29.3 |
| Հասարակական կարգի պահպանություն | 16.2 | 20.8 | 24.6 | 6.9 | 8.3 | 10.0 | 13.6 |
| Կրթություն և գիտություն | 29.1 | 34.8 | 47.4 | 11.3 | 13.2 | 16.8 | 24.9 |
| Առողջապահություն | 16.0 | 19.6 | 24.7 | 5.0 | 7.6 | 9.3 | 12.0 |
| Սոց. ապահովագրություն և ապահովություն | 23.8 | 29.3 | 35.0 | 13.8 | 12.8 | 16.4 | 20.0 |
| **Ընթացիկ ծախսեր** | **219.4** | **222.3** | **262.8** | **na** | **95.6** | **111.6** | **132.3** |
| Աշխատավարձ | 20.6 | 13.7 | 24.2 | na | 4.4 | 10.0 | 13.6 |
| Տոկոսավճարներ | 15.7 | 11.4 | 9.8 | na | 6.2 | 4.6 | 4.5 |
| Սուբսիդիաներ | 8.2 | 14.5 | 18.1 | na | 6.3 | 9.3 | 7.4 |
| Ընթացիկ տրանսֆերտներ | 47.3 | 41.8 | 50.1 | na | 17.8 | 22.3 | 32.2 |
| Ապրանքներ և ծառայություններ | 127.5 | 140.9 | 160.5 | na | 60.7 | 65.2 | 74.6 |
| **Կապիտալ ծախսեր** | **34.2** | **83.8** | **60.6** | na | **26.2** | **18.3** | **25.8** |
| **Վարկավորում հանած մարում** | **10.3** | **6.6** | **10.5** | na | **3.9** | **5.2** | **6.2** |
| **Դեֆիցիտի ֆինանսավորում** | **35.6** | **20.7** | **31.7** | **9.4** | **6.0** | **6.9** | **3.1** |

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

*տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ փաստացի կատարման*

| | 2002 | 2003 | 2004 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | տարեկան ցուցանիշներ | | | առաջին կիսամյակի ցուցանիշներ | | | |
| **Հարկային եկամուտներ**, այդ թվում | **13.6** | **13.1** | **13.2** | **14.8** | **13.8** | **13.9** | **14.5** |
| Ավելացված արժեքի հարկ | 7.0 | 6.6 | 6.2 | 7.7 | 7.3 | 6.5 | 6.7 |
| Շահութահարկ | 1.3 | 1.1 | 1.7 | 1.5 | 1.1 | 1.8 | 2.5 |
| Եկամտահարկ | 0.9 | 1.0 | 1.1 | 0.9 | 1.1 | 1.2 | 1.2 |
| Ակցիզային հարկ | 2.6 | 2.4 | 2.1 | 2.6 | 2.5 | 2.4 | 1.8 |
| **Պաշտոնական տրանսֆերտներ** | **1.2** | **3.1** | **0.7** | **0.9** | **2.1** | **0.3** | **0.4** |
| **Ընդամենը պետբյուջեի ծախսեր**, այդ թվում | **19.4** | **19.2** | **17.6** | **19.8** | **18.7** | **17.1** | **18.0** |
| Պաշտպանություն | 2.7 | 2.7 | 2.8 | 3.0 | 2.9 | 3.2 | 3.2 |
| Հասարակական կարգի պահպանություն | 1.2 | 1.3 | 1.3 | 1.2 | 1.2 | 1.3 | 1.5 |
| Կրթություն և գիտություն | 2.1 | 2.1 | 2.5 | 2.0 | 2.0 | 2.1 | 2.7 |
| Առողջապահություն | 1.2 | 1.2 | 1.3 | 0.9 | 1.1 | 1.2 | 1.3 |
| Սոց. ապահովագրություն և ապահովություն | 1.7 | 1.8 | 1.8 | 2.4 | 1.9 | 2.1 | 2.2 |
| **Դեֆիցիտի ֆինանսավորում** | **2.6** | **1.3** | **1.7** | **5.0** | **4.8** | **3.3** | **3.5** |

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ: